Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Ինչու՞ մենք մարգարեների կարիք ունենք

Քանի որ Երկնային Հայրը սիրում է Իր զավակներին, Նա թույլ չի տալիս, որ նրանք քայլեն այս մահկանացու կյանքում առանց ղեկավարման և առաջնորդության: Մեր Երկնային Հոր ուսմունքները սովորական, կանխատեսելի, անհետաքրքիր բաներ չեն, որոնք դուք կարող եք վերցնել մոտակա գրադարանից: Դրանք Իր զավակներին սիրող ամենազոր, ամենագետ երկնային Էակի իմաստություններն: Նրա խոսքերի մեջ ներառված է բոլոր ժամանակների գաղտնիքը՝ այս կյանքի և գալիք աշխարհի երջանկության բանալին:

Երկնային Հայրը հայտնում է այս իմաստությունը աշխարհում գտնվող Իր զավակներին Իր ծառաների՝ մարգարեների միջոցով (տես Ամովս Գ.7): Ադամի ժամանակներից ի վեր Աստված խոսել է Իր զավակների հետ ընտրյալ խոսնակների միջոցով, ովքեր պատասխանատու են հայտնելու Նրա կամքը և խորհուրդը ուրիշներին: Մարգարեները ոգեշնչված ուսուցիչներ են և միշտ Հիսուս Քրիստոսի հատուկ վկաներն են (տես ՎԿՈՒ 107.23): Մարգարեները խոսում են ոչ միայն իրենց ժամանակի, այլ նաև բոլոր ժամանակների մարդկանց համար: Նրանց ձայները արձագանքում են դարերի միջով որպես Աստծո կամքի վկայություն՝ ուղղված Իր զավակներին:

Մեր ժամանակները չեն տարբերվում անցած դարերից: Տերն ավելի քիչ չի սիրում մեր օրերի մարդկանց, քան անցյալի: Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնման փառահեղ ուղերձներից մեկն այն է, որ Աստված շարունակում է խոսել Իր զավակների հետ: Նա թաքնված չէ երկինքներում, այլ խոսում է այսօր այնպես, ինչպես հին օրերում:

Մեծամասամբ այն, ինչ Տերը հայտնում է Իր մարգարեներին, նպատակ է հետապնդում կանխելու մեր վիշտը որպես անհատներ և որպես հասարակություն: Երբ Աստված խոսում է, Նա դա անում է Իր զավակներին սովորեցնելու, ոգեշնչելու, կատարելագործելու և նախազգուշացնելու համար: Երբ անհատները և հասարակությունները անտեսում են իրենց Երկնային Հոր ցուցումները, նրանք կանգնում են դժվարության, տառապանքի և ծանր աշխատանքի հավանական վտանգի առաջ:

Աստված սիրում է Իր բոլոր զավակներին: Ահա թե ինչու է Նա այնքան պատրաստակամ հաղորդակցվում մեզ հետ Իր մարգարեների միջոցով: Ճիշտ ինչպես մենք ենք լավագույնը կամենում մեր սիրելիների համար, Երկնային Հայրը կամենում է այն, ինչը լավագույնն է մեզ համար: Ահա թե ինչու են Նրա ցուցումները շատ վճռական և, երբեմն,

շատ հրատապ: Դա է պատճառը, որ Նա չի լքել մեզ այսօր, այլ շարունակում է հայտնել մեզ Իր կամքը Իր մարգարեների միջոցով: Մեր ճակատագիրը և մեր աշխարհի ճակատագիրը կախված է Իր զավակներին Աստծո հայտնած խոսքին մեր լսելուց և ուշադիր վերաբերմունք ցուցաբերելուց:

Մարդկությանն ուղղված Աստծո անգին ցուցումները գտնվում են Աստվածաշնչի, Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի և Թանկագին Մարգարիտի մեջ: Ի հավելումն, Տերը խոսում է մեզ հետ Իր ծառաների միջոցով, ինչպես Նա կանի կրկին առաջիկա գերագույն համաժողովի ժամանակ:

Բոլոր նրանց, ովքեր մտածում են, թե արդյո՞ք նման բան հնարավոր է, ովքեր կարող է հարցնեն. «Կարելի՞ է, որ Աստված խոսի մեզ հետ այսօր», իմ ողջ սրտով ես հրավիրում եմ՝ «գալ և տեսնել» (Հովհաննես Ա.46): Կարդացեք Աստծո խոսքը, ինչպես որ գրված է սուրբ գրություններում: Լսեք գերագույն համաժողովը ականջներով, որոնք կամենում են լսել Աստծո ձայնը՝ Նրա վերջին օրերի մարգարեների միջոցով: Եկեք, լսեք և տեսեք ձեր սրտով: Քանզի եթե դուք փնտրեք «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, [Աստված] կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ» (Մորոնի 10.4): Այս զորությամբ և դրա միջոցով ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսն ապրում և առաջնորդում է Իր Եկեղեցին ապրող մարգարե՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի միջոցով:

Եղբայրներ և քույրեր, Աստված խոսում է մեզ հետ այսօր: Եվ Նա կամենում է, որ Իր բոլոր զավակները լսեն և ուշադրություն դարձնեն Իր ձայնին: Երբ մենք անենք դա, Տերը մեծապես կօրհնի և կպաշտպանի մեզ՝ և այս կյանքում, և գալիք աշխարհներում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Առաջնորդվելով Ապրող Մարգարեի կողմից

Քրիսթի Ռիփա

Երբ ես 16 տարեկան էի, առաջին անգամ հնարավորություն ունեցա անձամբ ներկա լինել գերագույն համաժողովին: Իմ ընտանիքը ապրում էր արևմտյան Օրեգոնում, ԱՄՆ, և մենք մեկնեցինք Յուտա համաժողովին մասնակցելու և իմ ավագ եղբորը միսիոներների պատրաստման կենտրոն տանելու համար:

Ես գնացի համաժողովի՝ Սուրբ Հոգով ուսուցանվելու ցանկությամբ: Ի պատասխան, ես վկայություն ստացա Հոգուց, որը հավանաբար չէի ստանա, եթե պատրաստված չլինեի:

Նիստերից մեկի ժամանակ բոլորը ոտքի կանգնեցին և միասին երգեցին «Առաջնորդիր մեզ, ով Մեծն Եհովա» օրհներգը: Մինչ մենք երգում էինք, ես հստակ զգացի, որ պետք է նայեի շուրջս՝ Համաժողովների Կենտրոնի ներսում: Ես այդպես էլ արեցի և ցնցվեցի հազարավոր մարդկանց միասնության զորությունից, մինչ մենք բոլորս բարձրացրել էինք մեր ձայները՝ փառաբանելով Աստծուն:

Այդ ժամանակ ես մի զգացում ունեցա, ինչպես Նեփին, երբ տեսավ կյանքի ծառի տեսիլքը, քանի որ Հոգին ասաց ինձ. «Նայիր» (տես 1 Նեփի 11–14): Ես նայեցի Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին և զգացի, որ Եկեղեցում գոյություն ուներ միասնություն, քանի որ մենք առաջնորդվում էինք ապրող մարգարեի կողմից: Սուրբ Հոգու կողմից տրված վկայության շնորհիվ ես գիտեմ, որ Նախագահ Մոնսոնը մեր օրերի ճշմարիտ մարգարեն է, և ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը առաջնորդում է այս Եկեղեցին նրա միջոցով:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *First Presidency Message, March 2012*-ի թարգմանությունը: Armenian: 10363 201

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Իմ արքայության դուստրերը

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Մենք մեր Երկնային Հոր դուստրերն ենք: Նա գիտի մեզ, սիրում է մեզ և ծրագիր ունի մեզ համար: Այդ ծրագրի մի մասը ներառում է աշխարհ գալը, որպեսզի սովորենք ընտրել բարին և ոչ թե չարը: Երբ մենք ընտրում ենք պահել Աստծո պատվիրանները, մենք պատվում ենք Նրան և ընդունում ենք մեր ինքնությունը որպես Աստծո դուստրեր: Սփոփող Միությունը օգնում է մեզ հիշել այս աստվածային ժառանգությունը:

Սփոփող Միությունը և դրա պատմությունը ամրացնում և աջակցում են մեզ: Ջուլի Բ. Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, ասել է. «Որպես Աստծո դուստրեր դուք պատրաստվում եք հավերժական նպատակի համար և յուրաքանչյուրդ ունեք կանացի ինքնություն, էություն և պատասխանատվություն: Ընտանիքների, համայնքների, այս Եկեղեցու և փրկության անգին ծրագրի հաջողությունը կախված է ձեր հավատարմությունից: . . . [Մեր Երկնային Հոր] նպատակն էր, որ Սփոփող Միությունը օգներ զորացնել Իր ժողովրդին և պատրաստել նրանց տաճարի օրհնություններին: Նա հիմնեց [Սփոփող Միությունը]՝ Իր դուստրերին Իր աշխատանքին համապատասխան դարձնելու համար և ներգրավվելու նրանց Իր արքայությունը կառուցելու և Սիոնի տները ամրացնելու գործում»:[1]

Մեր Երկնային Հայրը մեզ յուրահատուկ աշխատանք է տվել Իր արքայությունը կառուցելու գործում: Նա նաև մեզ օրհնել է մեզ անհրաժեշտ հոգևոր պարգևներով, որ իրականացնենք այս յուրահատուկ աշխատանքը: Սփոփող Միության միջոցով մենք հնարավորություններ ունենք օգտագործելու մեր պարգևները, որպեսզի ամրացնենք ընտանիքները, օգնենք կարիքավորներին և սովորենք, թե ինչպես ապրենք որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, աշակերտ լինելու վերաբերյալ ասել է. «Աշակերտ լինելու ճանապարհով համբերատար քայլելով, մենք ինքներս մեզ ցույց ենք տալիս մեր հավատքի չափը, և ոչ թե մեր, այլ Աստծո կամքը ընդունելու մեր պատրաստակամությունը»:[2]

Եկեք հիշենք, որ մենք Աստծո դուստրերն ենք և ջանում ենք ապրել որպես Նրա աշակերտներ: Դա անելով, մենք կօգնենք կառուցել Աստծո թագավորությունը այստեղ երկրի վրա և արժանի դառնալ վերադառնալու Նրա ներկայություն:

Մեր պատմությունից

1842թ. ապրիլի 28-ին Մարգարե Ջոզեֆ Սմիթը Սփոփող Միության քույրերին ասաց. «Դուք այժմ գտնվում եք մի իրավիճակում, որում դուք կարող եք գործել համաձայն այն կարեկցանքի, որն Աստված դրել է [ձեր] մեջ: . . . Եթե դուք ապրեք ձեր արտոնություններին համապատասխան, հրեշտակները չեն կարող հետ պահվել ձեզ հետ ընկերակցվելուց»:[3]

Գնահատելով Սփոփող Միության զորությունը ուրիշներին ծառայելու և անհատների հավատքը մեծացնելու գործում, Զինա Դ. Հ. Յանգը՝ Սփոփող Միության երրորդ գերագույն նախագահը, 1893թ. խոստացել է քույրերին. «Եթե դուք փնտրեք ձեր իսկ սրտերի խորքերում, դուք Տիրոջ Հոգու օգնությամբ կգտնեք թանկագին մարգարիտը՝ այս աշխատանքի վկայությունը»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ
1. Ջուլի Բ. Բեք, «Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը», *Լիահոնա,* նոյեմբեր 2010, 112, 114:
2. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Աշակերտի ուղին», *Լիահոնա,* Մայիս 2009, 76:
3. Joseph Smith, in *History of the Church,* 4:605.
4. Zina D. H. Young, “How I Gained My Testimony of the Truth,” Young Woman’s Journal, Apr. 1893, 319.

Սուրբ գրություններից

Զաքարիա Բ.10,
Վարդապետություն և Ուխտեր
25.1, 10, 16. 138.38-39, 56.
«Ընտանիք՝ Հայտարարություն
աշխարհին» (*Լիահոնա* և *Ensign,*
նոյեմբեր 2010, 129)

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս ես կարող եմ օգնել իմ քույրերին հասնել Աստծո դուստրերի իրենց ներուժին:

2. Ինչպե՞ս ես կարող եմ իմ կյանքում կիրառել Վարդապետություն և Ուխտեր 25 -ում կանանց տրված խորհուրդն ու նախազգուշացումները:

Լրացուցիչ տեղեկության համար այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *Visiting Teaching Message, March 2012*-ի թարգմանությունը: Armenian: 10363 201